ՀՀ ,,Իջևանի Գ.Անանյանի անվան ավագ դպրոց,, ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ <<Ֆիզիկա>> առարկայի /շաբաթական 8 ժամ/ և <<պատմություն>> առարկայի / շաբաթական 8 ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):

2.Բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ(դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3.Անձնագրի պատճեն:

4.Ինքնակենսագրություն (Ձև4):

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում):

6.Մեկ լուսանկար 3x4 չափի:

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք:

8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում):

10.Որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը՝ 10^{00}-ից մինչև 15^{00} –ը, **բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերը: Մրցույթը** տեղի կունենա հոկտեմբերի 6-ին , ժամը՝ 15^{00}-**ին ՀՀ <<Իջևանի Գ.Անանյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Իջևան,Թատերական 3:**

,,Իջևանի Գ.Անանյանի ավագ դպրոց,, ՊՈԱԿ

Ք.Իջևան, Թատերական 3

ՀՎՀՀ 07602692

հ/հ ,,ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,,

900378000302

Հեռ՝ / 0263/ 4-26-89 /094/ 90 00 49